

## ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սույն թվականի ապրիլի 19—24 օրերին Իսպանիայի Բարսելոնա քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահության և խորհրդակցական կոմիտեի համաժողովը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից սույն ժողովին մասնակցում էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, որը խորհրդակցական կոմիտեի անդամ է:

Ժողովի ընթացքում քննարկվեցին առաջիկա տարվա ծրագիրը, կոմիտեների ու ենթակոմիտեների գործունեությունը: Ժողովին իրենց զեկուցումներով հանդես եկան ՍՍՀՄ Եկեղեցիների ներկայացուցիչները: Հայ Եկեղեցու մասին հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ Տ. Տիրան վարդապետը: Զեկուցումից հետո հայր սուրբը պատասխանեց հանդիսականների բազմաթիվ հարցերին՝ Սումգայիթի, Լեռնային Ղարաբաղի ու երևանյան ցույցերի մասին: Ժողովի մասնակիցները միահամուռ իրենց համերաշխությունը հայտնեցին հայ ժողովրդին ու Հայ Եկեղեցուն:

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղար Ժան Ֆիշերը համաժողովի անունից համապատասխան հեռագիր հղեց Ամենայն Հայոց Հայրապետին: